ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 01.12.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 38/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունների (կոնսորցիում) 12.11.2014թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-38/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը և կից փաստաթղթերը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 21.11.2014թ. թիվ 13-01/2509 գրությունը և կից փաստաթղթերը, ի լրումն 12.11.2014թ. ներկայացված բողոքին՝ Ընկերությունների 21.11.2014թ. թիվ 7574-2 գրությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 28.11.2014թ. թիվ 13-01/2555 գրությունը, «ԲԷՑ-ՊԸԾՁԲ-14/59» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2014թ. թիվ 02 արձանագրությունը և պարզեցված ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունն ու ԳԲԽ-38/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 28.11.2014թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունների (կոնսորցիում) ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

12.11.2014թ. ներկայացված բողոքով «Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունները (այսուհետ նաև՝ Ընկերություններ) հայտնել են, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար՝ ֆի-

նանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով, Պատվիրատուի կողմից կազմակերպվել է «ԲԷՑ-ՊԸԾՁԲ-14/59» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Պատվիրատուից 10.11.2014թ. ստացված գրությունում նշվել է, որ Ընկերությունների հայտը մերժվել է, քանի որ «Ասատրյանս» ՍՊԸ-ն ընդգրկված չէ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում, իսկ «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ն չունի ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա:

Ընկերությունները ներկայացված բողոքում նշել են, որ այդ եզրակացության հետ համաձայն չեն, քանի որ, ըստ իրենց, հարցն արդեն լուծված է «Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունների միջև կնքված կոնսորցիումի պայմանագրով: Մասնավորապես, կոնսորցիումի անդամ հանդիսացող «Ասատրյանս» ՍՊԸ-ն ունի ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա, իսկ մյուս անդամը՝ «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ն, ընդգրկված է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:

Ընկերությունները վերոնշյալ բողոքով և ի լրումն բողոքին ներկայացված 21.11.2014թ. N 7574-2 գրությամբ հայտնել են, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ ներկայացված հայտը համապատասխանել է հրավերով նախատեսված պայմաններին: Կոնսորցիումի պայմանագրով սահմանվել է, որ աշխատանքների 35%-ը կատարելու է «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ն՝ ապահովելով Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի պահանջը, իսկ 65%-ը «Ասատրյանս» ՍՊԸ-ն՝ ապահովելով լիցենզիայի պահանջը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ բողոքաբեր ընկերությունները խնդրել է վերանայել Ընկերությունների հայտն անբավարար գնահատելու և այն մերժելու վերաբերյալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2014թ. թիվ 02 արձանագրությամբ կայացրած, ինչպես նաև Ընթացակարգի արդյունքներով «ՍՈՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 21.11.2014թ. N 13-01/2509 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգը կազմակերպվել և իրականացվել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման համաձայն, իսկ հրավերի փաթեթը կազմվել է ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am կայքում զետեղված պարզեցված ընթացակարգի հրավերի օրինա-կելի ձևին համապատասխան:

Հրավերի 7.4.2 կետի 2-րդ ենթակետով նախատեսվել է, որ մասնակիցները կարող են Ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով և նման դեպքում հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապա-տասխանի համատեղ գործունեության պայմանագրով նախատեսված տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով նույն հրավերով սահմանված որակա-վորման պահանջներին: Հետևաբար՝ համատեղ գործունեության մասնակիցներից յուրաքանչյուր անդամն առանձին պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին, այն է՝

ա) մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու, անկախ աուդիտորների ցանկում /Հրավեր, մաս 1-ին, 1-ին կետ՝ «Գնման առարկայի բնութագիր»/: Տվյալ դեպքում այդ ցանկում ընդգրկված է միայն «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ն, իսկ «Ասատրյանս» ՍՊԸ-ն ընդգրկված չէ:

Սույն պահանջը նախատեսված է «Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսա-լիության ծրագրի» շրջանակներում Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի միջև 06.01.2011թ. կնքված ծրագրի համաձայնագրի 2-րդ բաժնի 1-ին ենթակետով, իսկ ընդունելի աուդիտորների ցանկը տրամադրվում է Համաշխարհային բանկի (այսուհետ նաև՝ ՀԲ) կողմից ծրագիրն իրականացնողի պահանջի դեպքում.

բ) մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է ունենա ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա /Հրավեր, մաս 1-ին, 1-ին կետ՝ «Գնման

առարկայի բնութագիր»/: Տվյալ դեպքում ՀՀ-ում աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ունի միայն «Ասատրյանս» ՍՊԸ-ն, իսկ «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ն՝ ոչ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով գտել է, որ «Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունների համատեղ հայտը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, ինչի պատճառով Ընկերությունների ներկայացրած հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Կենտրոնում 27.11.2014թ. 15:30-ին հրավիրված քննարկման ժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ համատեղ գործունեության պայմանագրում նշված չի եղել կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի ստանձնած պարտավորության չափը: Այսինքն՝ պարզ չէ, թե որ մասնակցի կողմից կոնկրետ ինչ աշխատանքներն են կատարվելու, հետևաբար երկու անդամին էլ առաջադրվել են ծառայությունների ամբողջ ծավալի կատարման համար անհրաժեշտ որակավորման պահանջներ:

Վերոնշյալ բողոքի քննարկման ժամանակ կատարված այն հարցադրման կապակցությամբ, թե արդյոք ՀԲ-ին պետք է տրամադրվի աուդիտի կողմից կազմված հաշվետվությունները և մյուս փաստաթղթերն ամբողջությամբ, թե պետք է տրամադրվի միայն վարկային ծրագրին վերաբերող մասը, Պատվիրատուն Կենտրոն ներայացրած 28.11.2014թ. թիվ 13-01/2555 գրությամբ հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը ներառում է ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, որը կազմվում է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների հիման վրա և իրենից ներկայացնում է Ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված «Ծառայությունների մատուցման գնման պայմանագրի» հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, «(ա)», «(բ)», «(գ)», «(դ)», «(ե)», «(զ)» և «(ը)» կետերով սահմանված պահանջները, իսկ «(է)» կետն առանձին հաշվետվություն է, որը ներկայացվում է միայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: Նշված հավելվածի «(թ)» կետով ներկայացված պահանջները ներառվում են «(ը)» կետով նախատեսված

հաշվետվությունում և այն իրենից ներկայացնում է եզրակացություն, որը տրամադրվում է հիմնադրին՝ նրա համաձայնությամբ նաև վարկատու կազմակերպություններին:

Վերոնշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է նաև, որ աուդիտը, ըստ էության, իրականացվում է երկու հաշվետվությունների նկատմամբ՝

ա) ընդհանուր տարեկան հաշվետվությունների աուդիտ՝ «(ա)»-ից «(Թ)» կետեր, բացառությամբ «(ը)» կետի,

բ) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին ներկայացվող հաշվետվությունների աուդիտ՝ «(է)» կետ:

Ընդհանուր տարեկան հաշվետվությունների աուդիտը՝ «(ա)»-ից «(թ)» կետեր, բացառությամբ «(է)» կետի, մեկ միասնական հաշվետվություն է, որի վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը և ղեկավարությանն ուղղված նամակը տրվում է միասնական, այլ ոչ թե հաշվետվության առանձին մասերով:

Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. ԳԲԽ-38/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 28.11.2014թ. եզրակացությունը և առաջարկել է «Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունների (կոնսորցիում) 12.11.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-38/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-38/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ՊԸԾՁԲ-14/59» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որի

Հրավերի 7.4.2 կետի հիմքով համատեղ ներկայացված հայտով մասնակցել են նաև «Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունները:

2. Հրավերի 1-ին մասի 1-ին կետով նախատեսվել է պահանջ, որ մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում և ունենա աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա:

3. «Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունների միջև 30.10.2014թ. կնքված համատեղ գործունեության (կոնսորցիում) պայմանագրի 1-ին կետի 1.1.2 ենթակետով սահմանվել է, որ աշխատանքների 65%-ը իրականացվելու է «Ասատրյանս» ՍՊԸ-ի, իսկ 35%-ը՝ «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ի կողմից:

4. «Ասատրյանս» ՍՊԸ-ն ունի ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա, սակայն ներառված չէ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտոր-ների ցանկում (այսուհետ նաև՝ Ցանկ), իսկ «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ն ներառված է Ցանկում, սակայն չունի ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2014թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 02 արձանագրության՝ նիստի օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ կայացրած որոշմամբ, Ընկերությունների համատեղ ներկայացրած հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ այն չի համապատասխանել ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2014թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 02 արձանագրության՝ նիստի օրակարգի 5-րդ հարցին վերաբերող 1-ին կետով կայացրած որոշմամբ «ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած ու ընտրված մասնակից:

7. Պատվիրատուի կողմից 13.11.2014թ. հրապարակվել է գնահատող հանձնա-ժողովի 07.11.2014թ. թիվ 02 որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով «Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունների (կոնսորցիում) 12.11.2014թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախա-տեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ գնումների գործընթացին մասնակցող անձանց հայտերը գնահատվում են բավարար միայն այն դեպքում, երբ դրանք համապատասխանում են հրավերով նախատեսված պայմաններին:

Ընթացակարգի Հրավերի 7.4.2 կետի 2-րդ ենթակետով նախատեսվել է, որ մասնակիցները կարող են ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով և այդ դեպքում հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը, ինչը պետք է համապատասխանի համատեղ գործունեության պայմանագրով նախատեսված տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով նույն հրավերով սահմանված որակա-վորման պահանջներին:

Ընկերությունների ներկայացրած 30.10.2014թ. համատեղ գործունության պայ-մանագրի 1-ին կետի 1.1.2 ենթակետով սահմանվել է, որ աշխատանքների 65%-ը կատարվելու է «Ասատրյանս» ՍՊԸ-ի, իսկ 35%-ը՝ «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ի կողմից: Այսինքն՝ կողմերի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրով չի նախատեսվել, թե Հրավերի 6-րդ հավելվածի թիվ 1 հավելվածով սահմանված տեխ-նիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «(ա)»-ից «(Թ)» կետերով նախա-տեսված աշխատանքներից որոնք են կատարվելու կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն Ընկերությունների ներկայացրած համատեղ մասնակցության հայտի գնահատման ժամանակ կոնսորցիումի մասնակիցներից յուրաքանչյուրին առաջադրել է ծառայությունների ամբողջ ծավալի իրականացման համար անհրաժեշտ, Հրավերի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված որակավորման հետևյալ պահանջները՝

- մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում,

- մասնակիցը պետք է ունենա ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա:

Ցանկում ընդգրկված լինելու պահանջը նախատեսված է «Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի» շրջանկներում Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի միջև 06.01.2011թ. կնքված ծրագրի համաձայնագրի II-րդ բաժնի «բ» ենթակետով, իսկ Հրավերի գնման առարկա հանդիսացող աուդիտորական ծառայությունների իրականացումը «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 18-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն, սահմանված է որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

Ընկերությունների միջև 30.10.2014թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի 1-ին կետի 1.1.2 ենթակետով սահմանվել է, որ աշխատանքների 65%-ը իրականացվելու է «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից, իսկ 35%-ը՝ «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ի կողմից, մինչդեռ վերոնշյալ մասնաբաժիններում ներառված աշխատանքների տեսակները նշված չեն, ինչը հնարավորություն չի ընձեռում պարզելու Ընկերություններից յուրաքանչյուրի կողմից կատարման ենթակա աշխատանքները, հետևաբար նաև ստանձնած պարտավորությունների չափով Ընկերություններից յուրաքանչյուրին առաջադրվող որակավորման պահանջների ծավալներն՝ ըստ կատարման ենթակա առանձին աշխատանքների:

Վերոգրյալից հետևում է, որ հայտով ներկայացված համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում կոնսորցիումի անդամներից յուրաքանչյուրը պետք է բավարարեր Հրավերի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պահանջներին, մինչդեռ, կոնսորցիումի անդամ «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊԸ-ն չունի ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա, իսկ «Ասատրյանս» ՍՊԸ-ն ընդգկված չէ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ասատրյանս» և «Գլոբալ Աուդիտ Սերվիսիս» ՍՊ ընկերությունների 12.11.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ֆրանգյան Ազգանուշ**

Անդամներ՝ **Խաչատրյան Գևորգ**

Պողոսյան Լիդիա